ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2023 թ. հունվարի 20-ի թիվ 102 որոշմամբ

ՌԵԿՏՈՐ Ա. Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգ

Սույն կանոնակարգը սահմանում է Հայ-Ռուսական համալսարանի (այսուհետ՝ ՀՌՀ) մագիստրոսի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի 2023-2024 ուսումնական տարվա անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) և վճարովի (ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով) առկա և հեռակա ուսուցման ընդունելության կարգը:

ՀՌՀ մագիստրատուրայում ուսամնառությունն իրականացվում է հայոց լեզվով (ըստ ՀՀ և ՀՌՀ չափորոշիչների): Առկա ուսուցման տևողությունը սահմանվում է 1-2 տարի, հեռակայինը՝ 2 տարի 6 ամիս:

ՀՌՀ մագիստրատուրայի շրջանավարտներին հանձնվում է ՀՀ պետական նմուշի դիպլոմ:

ՀՌՀ մագիստրատուրայի **առկա** ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների մագիստրոսական ծրագրերով՝

- **061101.00.7 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**
  061101.05.7 Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում
- **071301.00.7 Էներգետիկա**
  071301.05.7 Այլընտրանքային էներգետիկա **(մեկամյա ծրագիր)**
- **071403.00.7 Ռադիոտեխնիկա և կապ**
  071403.04.7 Ռադիոլոկացիայի, ռադիոնավիգացիայի և կառավարման էլեկտրոնային համակարգեր և սարքեր
- **051101.00.7 Կենսաբանություն**
  051101.14.7 Գենային ճարտարագիտություն
- **041201.00.7 Ֆինանսներ**
  041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
- **041301.00.7 Կառավարում**
  041301.01.7 Կառավարում
  041301.27.7 Մարդկային ռեսուրսների կառավարում

- **041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)**
  041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)
- **041802.00.7 Բիզնես վարչարարություն (մեկամյա ծրագիր)**
  041802.01.7 Բիզնես վարչարարություն
- **101501.00.7 Զբոսաշրջություն**
  101501.01.7 Զբոսաշրջություն
- **042101.00.7 Իրավագիտություն**
  042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
  042101.05.7 Գործարարական իրավունք
  042101.10.7 Առողջապահական իրավունք
- **042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ**
  042802.03.7 Կրիմինալիստիկա **(մեկամյա ծրագիր)**
- **031201.00.7 Քաղաքագիտություն**
  031201.09.7 Կիրառական քաղաքագիտություն
- **032101.00.7 Լրագրություն**
  032101.06.7 Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն
- **022801.00.7 Արևելագիտություն**
  022801.01.7 Արաբագիտություն
  022801.03.7 Իրանագիտություն
- **091801.00.7 Հանրային առողջություն և առողջապահություն**
  091801.05.7 Թվային առողջապահություն
- **022201.00.7 Պատմություն**
  022201.03.7 Համաշխարհային պատմություն **(մեկամյա ծրագիր)**

Առկա ուսուցման ձևով ՀՌՀ մագիստրատուրայի **անվճար տեղերին** մրցութային կարգով կարող են հավակնել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:

Առկա ուսուցման ձևով ՀՌՀ մագիստրատուրայի անվճար տեղերին մրցութային կարգով կարող են հավակնել ՀՌՀ և այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել են 70 և բարձր միավոր, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը (GPA)) կազմում է առնվազն 70 (2.8):

ՀՌՀ տվյալ մասնագիտության շրջանավարտներն ընդունվում են մրցութային կարգով՝ հիմք ընդունելով դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ը, առանց ընդունելության քննությունների:

ՀՌՀ այն շրջանավարտները, ովքեր փոխում են մասնագիտությունը, ընդունվում են մրցութային կարգով՝ հիմք ընդունելով դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ը՝ տվյալ մասնագիտությունից քննություն/հարցազրույց անցնելուց հետո: Քննություն/հարցազրույցը գնահատվում է «ստուգված/չստուգված» համակարգով: Դիմորդները ստանում են ստուգարքը 20-ից 17 միավոր հավաքելու դեպքում:

Այլ բուհերի շրջանավարտներն ընդունվում են մրցութային կարգով՝ հիմք ընդունելով դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ը՝ տվյալ մասնագիտությունից քննություն/հարցազրույց անցնելուց հետո: Քննություն/հարցազրույցը գնահատվում է «ստուգված/չստուգված» համակարգով: Դիմորդները ստանում են ստուգարքը 20-ից 17 միավոր հավաքելու դեպքում:

Առկա ուսուցման ձևով ՀՌՀ մագիստրատուրայի **վճարովի տեղերին** մրցութային կարգով կարող են հավակնել ՀՌՀ և այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները:

50 (2.00) և բարձր ՄՈԳ (GPA) ունեցող ՀՌՀ շրջանավարտների ընդունելությունը տվյալ մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննությունների:

50-ից (2.00) ցածր ՄՈԳ (GPA) ունեցող ՀՌՀ շրջանավարտների ընդունելությունը տվյալ մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի կրթական ծրագրին համապատասխան հարցաշարով անցկացված հարցազրույցի արդյունքների հիման վրա:

ՀՌՀ և այլ բուհերի այն շրջանավարտները, ովքեր փոխում են մասնագիտությունը, անցնում են հարցազրույց մասնագիտությունից՝ համապատասխան Ինստիտուտի որոշմամբ:

Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են սահմանված կարգով և ժամկետում վճարել ուսման վարձավճարը, որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը:

Առկա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են **ս.թ. մայիսի 15-ից մինչև հունիսի 20-ը ներառյալ հետևյալ տարբերակներից մեկով՝**

- ներկայացվում է անձամբ դիմորդի կողմից,
- ուղարկվում է փոստային օպերատորների միջոցով,
- ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ համալսարանի էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով:

Վճարովի տեղերի հավակնորդ այն դիմորդների համար, ովքեր հարգելի պատճառով չեն կարողացել մասնակցել առկա ուսուցման ընդունելության մրցույթին, փաստաթղթերը կընդունեն **ս.թ. օգոստոսի 21-25-ը:**

ՀՌՀ մագիստրատուրայի **հեռակա** ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների մագիստրոսական ծրագրերով՝

- **041201.00.7 Ֆինանսներ**
  041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
- **041301.00.7 Կառավարում**
  041301.01.7 Կառավարում
  041301.27.7 Մարդկային ռեսուրսների կառավարում
- **041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)**
  041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)
- **101501.00.7 Զբոսաշրջություն**
  101501.01.7 Զբոսաշրջություն
- **042101.00.7 Իրավագիտություն**
  042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
  042101.05.7 Գործարարական իրավունք
- **031201.00.7 Քաղաքագիտություն**
  031201.09.7 Կիրառական քաղաքագիտություն
- **032101.00.7 Լրագրություն**
  032101.06.7 Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն

ՀՌՀ մագիստրատուրայի **հեռակա** ուսուցման ընդունելությունը ՀՌՀ և այլ բուհերի շրջանավարտների համար իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ համապատասխան Ինստիտուտի որոշմամբ:

Հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են **ս.թ. սեպտեմբերի 11-ից 22-ը ներառյալ**:

Յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը 5-ն է: Համապատասխան կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը չապահովելու դեպքում, դիմորդի նախաձեռնությամբ, ընդունող հանձնաժողովը քննարկում է դիմորդի մեկ այլ կրթական ծրագրով ուսումնառության հնարավորությունը:

Սույն կետով սահմանված թիվը կարող է փոփոխվել նոր կրթական ծրագրի ներդրման դեպքում: Այս դեպքում սովորողների նվազագույն թիվը սահմանում է ընդունող հանձնաժողովը:

Մագիստրատուրայի կրթական ծրագրերով ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- անձը հաստատող փաստաթուղթ – անձնագիր կամ նույնականացման քարտ (պատճենը),
- բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ և հավելված (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, պատճենը),
- փաստաթուղթ զինվորական ծառայության վերաբերյալ (զինհաշվառման փաստաթուղթ կամ զինվորական գրքույկ, պատճենը): Այն անձանցից, ովքեր գտնվում են զինակոչային տարիքում, փաստաթղթերն

ընդունվում են այն դեպքում, եթե համապատասխան զինվորական փաստաթղթերում առկա են տարկետման իրավունքի մասին նշումներ,

- 4 գունավոր, նույնատիպ լուսանկար (3×4 չափսի):

Դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով ընդունող հանձնաժողովն իրավասու է ըստ անհրաժեշտության դիմորդից պահանջել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» ներկայացնել տեղեկանք դիպլոմի իսկության մասին:

Մագիստրատուրա դիմողները փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար վճարում են 1500 դրամ, իսկ ընդունելության քննություններին մասնակցելու համար՝ 1500-ական դրամ յուրաքանչյուր (քննության/հարցազրույցի) համար, որոնք նշված են դիմումներում: Անկախ ընդունելության քննություններին մասնակցությունից և արդյունքներից՝ զանձված գումարը հետ չի վերադարձվում: